

ԺԲ.00.01 - ՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

ԱՍՊԻՐԱՆՏՈՒՐԱՅԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ՔՆՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԱՇԱՐ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹԱՄԱՍ

1. Պետության և իրավունքի տեսության հասկացությունը, որպես գիտության և դասընթացի գործառնությունները:
2. Պետության առաջացման տեսությունների բազմազանությունը և դրանց բնութագիրը:
3. Պետության հասկացությունը, եությունը, սոցիալական նշանակությունը, էվոլյուցիան:
4. Պետության կառուցակարգը (մեխանիզմը): Պետական ապարատի ընդհանուր սկզբունքների բնութագիրը:
5. Իրավունքի հասկացությունը՝ օբյեկտիվ և սուբյեկտիվ իմաստներով: Իրավահասկացողություն:
6. Իրավունքի և օրենքի հարաբերակցությունը: Իրավական օրենք:
7. Իրավագիտակցություն. հասկացությունը, կառուցվածքը, տեսակները, գործառնությունները:
8. Իրավական մշակույթ (կուլտուրա). հասկացությունը և կառուցվածքը: Իրավական նիհիլիզմ և իրավական իդեալիզմ:
9. Իրավունքի նորմի հասկացությունը, տեսակները, կառուցվածքը և տարրերի հիմնահիմքերը:
10. Իրավունքի նորմերի կիրառման հասկացությունը, փուլերը, ներկայացվող պահանջները:
11. Իրավաչափ վարձագիծ և իրավախախտում. հասկացությունը և տեսակները:
12. Ինքնիշխան պետության իրավաբանական բովանդակության դրսևորման ձևերը:
13. Ժողովրդաիշխանության անմիջական ձևերի բովանդակությունը և դրանց իրացման կարգը:
14. ՀՀ կառավարության սահմանադրաիրավական կարգավիճակը:
15. ՀՀ դատական իշխանության մարմինները, կազմավորման և գործունեության կարգը և սկզբունքները: Դրանց էվոլյուցիան՝ սահմանադրական բարեփոխումների համատեքստում:
16. Ազգային ժողովի պատգամավորական խմբակցությունների և խմբերի կազմավորման և լուծարման առանձնահատկությունները:
17. ՀՀ սահմանադրական կարգի հասկացությունը և բովանդակությունը:
18. Տնտեսական, սոցիալական և մշակութային ոլորտներում օրենսդրական երաշխիքները:
19. «Ընտրական իրավունք» և «ընտրական համակարգ» եզրույթների իրավական նշանակությունը և հարաբերակցությունը:
20. Սահմանադրական դատավարության ընթացակարգն ու դրա առանձնահատկությունները:
21. Տեղական ինքնակառավարման հասկացությունը, տեղական ինքնակառավարման մարմինների հիմնական լիազորությունները:
22. Իրավունքների և օրենքով պահպանվող շահերի պաշտպանության ձևերը: Դատական պաշտպանության և արդար դատաքննության իրավունքները:
23. Սահմանադրական դատարանի որոշումների, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի և Վճռաբեկ դատարանի որոշումների նշանակությունը քաղաքացիական դատավարությունում:

24. Երրորդ անձանց հասկացությունը և տեսակները, գործի քննությանը ներգրավվելու հիմքերը և դատավարական կարգը:
25. Դատակցության հասկացությունը և հիմքերը: Դատակցության տեսակները. պարտադիր և ֆակուլտատիվ դատակցություն: Դատակիցների մասնակցությունը վարույթին:
26. Ոչ պատշաճ կողմի հասկացությունը: Հայցվորի ոչ պատշաճ լինելու հետևանքները: Ոչ պատշաճ պատասխանողի փոխարինման դատավարական կարգը: Գործի քննությանը նոր պատասխանողի ներգրավումը:
27. Ենթակայության հասկացությունը:
28. Դատական ենթակայություն և ընդդատություն: Քաղաքացիական դատավարության կարգով քննության ենթակա գործերի շրջանակը որոշելու չափանիշները:
29. Դատական ծախսերի հասկացությունը և տեսակները քաղաքացիական դատավարությունում: Դատական ծախսերի ինստիտուտի գործառույթները:
30. Վարչական դատարանի իրավասության տարանջատման չափանիշները:
31. Գործի փաստական հանգամանքների ի պաշտոնե պարզման և տնօրինչականության սկզբունքների հարաբերակցությունը վարչական դատավարությունում:
32. Դատական ծանուցման առարկան, սուբյեկտները և եղանակները:
33. Միջազգային և ներպետական իրավունքի հարաբերակցությունը
34. Միջազգային իրավունքի աղբյուրները
35. Միջազգային իրավունքի սուբյեկտները
36. Տարածքների տեսակները միջազգային իրավունքում
37. Միջազգային պայմանագրերի կնքումը: Միջազգային պայմանագրերի կնքման գործընթացի իրավական կարգավորումը ՀՀ սահմանադրությամբ
38. Բնակչության և քաղաքացիության հասկացությունները: Քաղաքացիության ձեռքբերման, փոփոխության և դադարեցման հիմքերը
39. Մարդու իրավունքների պաշտպանության ոլորտում միջազգային համագործակցությունը
40. Միավորված ազգերի կազմակերպությունը: ՄԱԿ-ի գլխավոր մարմինները
41. Դիվանագիտական ներկայացուցչության անձնակազմի անդամների արտոնությունները և անձեռնմխելիությունները
42. Միջազգային վեճերի խաղաղ կարգավորման միջոցները
43. Հանցակազմի տեսակները
44. Հանցագործությունների դասակարգումը
45. Քրեական օրենքի հետադարձ ուժը
46. Քրեական օրենքի գործողությունը ժամանակի ընթացքում
47. Հանցափորձը և դրա տեսակները
48. Հանցագործության նախապատրաստություն
49. Հանցակցություն
50. Սպանությունը մեղմացնող հանգամանքներում
51. Հափշտակության ծանրացնող հանգամանքները
52. Շորթում
53. Քրեական հետապնդում. հասկացությունը, սուբյեկտները և նրանց լիազորությունները:
54. Արդար դատական քննության իրավունքը քրեական դատավարությունում:
55. Խափանման միջոցների հիմքերը և կիրառման դատավարական կարգը:
56. Մեղադրանքի կողմի մեջ մտնող սուբյեկտների ընդհանուր բնութագիրը::
57. Պաշտպանության կողմի մեջ մտնող սուբյեկտների ընդհանուր բնութագիրը:
58. Ապացույցի հասկացությունը և նշանակությունը քրեական դատավարությունում:
59. Անձին որպես մեղադրյալը ներգրավելը և մեղադրանքի առաջադրումը:

60. Զննչական գործողությունների հասկացությունը և կատարման ընդհանուր կանոնները:
61. Դատաքննության ընդհանուր բնութագիրը և դատավարական կարգը:
62. Վերաքննիչ վարույթի հասկացությունը և նշանակությունը:
63. Վճռաբեկության կարգով դատական որոշումները բողոքարկելու իրավունք ունեցող սուբյեկտները, բողոքարկման հիմքերը և կարգը:
64. Զաղաքացիական իրավունքների իրականացման սկզբունքները և պաշտպանությունը
65. Զաղաքացիական իրավունքի սուբյեկտների իրավասուբյեկտությունը
66. Սեփականության իրավունքի բովանդակությունը, ծագումը և դադարումը
67. Գործարքի հասկացությունը, տեսակները և անվավերությունը
68. Գույքի օտարման և գույքի օգտագործման պայմանագրերի համակարգը և բնութագիրն ըստ ՀՀ քաղաքացիական օրենսդրության
69. Վարկահաշվարկային հարաբերությունները կարգավորող պայմանագրերի համակարգը և բնութագիրը
70. Պատվին և արժանապատվությանը պատճառված վնասի հատուցումը
71. Հեղինակային և հարակից իրավունքները ՀՀ օրենսդրությամբ
72. Ժառանգման հիմքերն ըստ ՀՀ օրենսդրության
73. Ամուսնության և ամուսնալուծության ընտանեկան-իրավական կարգավորումը
74. Ամուսինների, ծնողների և երեխաների անձնական և գույքային իրավունքները
75. Ալիմենտային պարտավորությունների ընտանեկան-իրավական կարգավորումը

ԼՐԱՑՈՒՑԻՉ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹԱՄԱՍ

1. Պետության գործառնությունները. հասկացությունը, դասակարգումը, դինամիկան, փոխգործողությունը:
2. Պետության գործառնությունների իրականացման ձևերը և մեթոդները, դրանց տեսակները:
3. Պետության ձևի հասկացությունը և տարրերը: Պետության էության, տիպի և ձևի հարաբերակցությունը:
4. Պետական ապարատը, դրա կազմակերպման և գործունեության սկզբունքները:
5. Իրավական հիմնական հայեցակարգերը:
6. Իրավունքի սկզբունքները. հասկացությունը, նշանակությունը և դասակարգումը:
7. Հասարակության իրավական համակարգը. հասկացությունը և կառուցվածքը, իրավական համակարգերի տեսակների բնութագիրը:
8. Սոցիալական և իրավական պետությունը. հասկացությունը, հատկանիշները:
9. Իրավունքի նորմի և նորմատիվ ակտի հոդվածի հարաբերակցությունը: Իրավանորմերի շարադրման եղանակները:
10. Իրավունքի ձևի և աղբյուրի հասկացությունները: Իրավունքի ձևերի դասակարգումը:
11. Նորմատիվ ակտերի հասկացությունը, հատկանիշները և տեսակների բնութագիրը:
12. Իրավակազմավորում և իրավաստեղծագործություն. հասկացությունը, սկզբունքները, տեսակները:
13. Նորմատիվ իրավական ակտերի համակարգումը. հասկացությունը և տեսակները:
14. Իրավաբանական (օրենսդրական) տեխնիկա. տարրերը և նշանակությունը:
15. Իրավունքի համակարգ. հասկացությունը, կառուցվածքի տարրերը, իրավական կարգավորման առարկան, մեթոդը:
16. Իրավահարաբերությունները. հասկացությունը, տարրերը, դասակարգումը:
17. Սուբյեկտիվ իրավունք և իրավական պարտականություն. հասկացությունը և կառուցվածքը:
18. Իրավունքի կենսագործումը. հասկացությունը և տեսակները:
19. Իրավունքի բացերը. հասկացությունը, վերացման ու հաղթահարման եղանակները: Իրավունքի և օրենքի անալոգիա:
20. Իրավաբանական կոլիզիաները և դրանց լուծման եղանակները:
21. Իրավունքի նորմերի մեկանաբանումը. հասկացությունը, տեսակները մեկնաբանման եղանակները: Իրավունքի նորմերի պարզաբանումը:
22. Իրավական պատասխանատվություն. հասկացությունը, հատկանիշները, տեսակները, սկզբունքները:
23. Իրավական կարգավորման կառուցակարգը. հասկացությունը, հիմնական տարրերը, փուլերը:
24. Իրավական օրինականության հասկացությունը և սկզբունքները, երաշխիքները և դրանց տեսակները:
25. Իրավակարգի հասկացությունը, օրինականության, իրավակարգի և հասարակական կարգի հարաբերակցությունը: